

20067
20068
20069

891.99-192
8-93

Omo. XII № 780



Omo. XII 780

780

780

780

780



780.

780

XII

XII

Dr

788

780

2003



ՍՄԲԱՏ ՄԱՏԻՆԵՑՆ

ԹԱԶՄԸԿԱՆ ԵՐԳԵՐ



Պէտք է մեզ բարձր
Պահել սուրբ Խաչը,
Որ չխոնարհեի
Լուսնի առաջը.
Հեղ.



ԱԼՔՍԱՅՆԴՐԱՊՈՂ
Տպարան Յ. Սանոյեանցի
1915

33 408-44-4.

ԿԱՐԵՎ ԺԱՌՄԱՆ

պատմութեան
պատմութեան
պատմութեան
պատմութեան



17344-58



ՅՈՒԹ
ԾՈՒՅ

ԱՆԴՐԱՆԻԿ

Հայ կամաւորների առաջնորդ



ՄԵԾ ՊԱՏԵՐԱԳՄ

Թմրած կապանքից բազկունք քաջերի
Հզօր մոռսիոյ դղբդիւնների,
Բացւեց ազտառւեց, գործ յանձնարարւեց,
Ողջ համայնութեանն ապարէզ հանւեց,
Բայց թէ ով հայեր, մուսացէք լաց, թաց,
Արդէն փրկութեան օրերն է հասած,
Զեռքերս ծալած յուսալ առ Աստւած,
Լաւ է համարենք մենք մեզի մեռած:

Սպահ ու հպարտ անխիղճ Գերմանիան
Ճանկացաւ լինել պետ ընդհանրութեան.
Հունդարեան գարձուց ձեռքին խաղալիք.
Կարգաց Սերբերին բուռն սպառնալիք,
Արիւնով ներկեց ծովեր ու գետեր.
Դամբարան շինեց գաշտեր ահատաներ.

Զեռքերս ծալած յուսալ առ Աստւած.
Լաւ է համարել մենք մեզի ջնջած:

Հզօր մոռսիան յանուն մարգկութեան
Թշւառ Սերբերին կանգնելով պաշտպան,



Յարդեցին նորան Թրանսիան, Անդլիան,
Բէլգիան, Եապոնիան օգնութեան հասան,
Էլ համբերելու ժամերն է, անցած,
Գոռողին ջնջել պէտքէ միացած:

Զեռքերս ծալած յուսալ առ Աստւած,
Լաւ է համարենք մենք մեզի մեռած:

Աստւած ոչ անի անգութ Գերմանիան
Իւր ոտքը ուղղէ զէպ Անատոլիան՝
Նախ պիտ նա ջնջէ խեղճուկ հայերին
Ապա ձեռք առնի նոր միւսներին,
Աթափւենք, հայեր, ձեր օրն է հասած,
Սուլթանի յոյսը միք թողնի ծաղկած:

Զեռքերս ծալած յուսալ առ Աստւած,
Լաւ է համարենք մենք մեզի ջնջւած:

Նա Օսմանցուին խաղալիք դարձրեց
Իւր շահի համար մեր դէմը լարեց
Սոված, մերկաբաց, խեղճ ասկեարներին
Սովից ու ցրտից մահւան մատնւեցին.
Դարենոր հաշիւներս պիտ տեսնինք մաքրած,
Արդէն փրկութեան ժամն է հասած,

Զեռքերս ծալած յուսալ առ Աստւած
Լաւ է համարենք մենք մեզի մեռած:

Այժմս Ռուսիան իւր հզօր թեով
Առաջ է քաշել մեզի նա սրառվ,
Գաղտնի գործերս երևան ելաւ,
Վրէժի օրն է, յոյսերս յարեաւ,
Հառէք փրկութեան պատւին հայրեն եաց
Ազատէք հային դարերով ճնշւած:

Զեռքերս ծալած յուսալ առ Աստւած,
Լաւ է համարենք մենք մեզի մեռած:

Անթիւ զոհերի վրէժի համար
Պէտքէ տիւ գիշեր կռւել չարաչար,
Փրկիւ խեղճ ազգին լծից Տաճկական
Եւ սիրով գոչել-կեցցէ Ռուսիան:
Դարենոր ճնշումից կինինք ազատւած՝
Երբ տեսանք Ռուսիոյ վրոշակը կանգնած,

Զեռքերս ծալած յուսալ առ Աստւած
Լաւ է համարենք մեզի ջնջւած:

Անվեհեր քաջին մարտի դաշտ է պէտք,
Թշնամու հիտ նա միշտ անհաշտ է պէտք,
Հայ չի անուանւի նա այս դրութեան
Ով որ չգործէ յանուն օգնութեան,
Թուլամսրթ հային թող պատժէ Աստւած,
Ով այս սուրբ գործից հեռու է պահւած,

Բայց որ չկուինք և մնանք ծածկւած,
ել մեզի փրկանք հ՞րբ կուտայ Աստւած:

ԶԻՆԻՈՐԻ ՀՐԱԺԵՇՏԸ.

Անգին մայրիկ, ինձ յորդորէ,
Քաջալերէ, որ գնամ,
Գնամ ու մեր ազգի գործին
իմ ուժիս չափ օգուտ տամ:

Օրինակ առ իտալացի
Աղջկայ խրախուսից,
Ուրախ սրտով ճանապարհ ձիգ,
Մաղթէ ինձ կեանք Յիսուսից:

Նա եղբօրն էր քաջալերում
Սիրով գնալ կուի դաշտ,
Իսկ դու ինձի քաջալերէ,
Ճնջենք թշնամուն անհաշտ:

Շատ տարիներ ծալապատիկ
Մօտդ նատած՝ ի՞նչ օգուտ,
Զէ որ արիւնարբու թուրքը
Մեղ կը տանջէ միշտ անգութ:

Դու լաւ գիտես, մեր կայքերը
Երբեք մեզ չեն պատկանում,
Երի ուժով քաշում տանում
Անգութ ըիւրդը արնախում:

Օքնէ մեզի, որ մենք գնանք
Թէկ մեռնինք քաջի պէս,
Գոնէ դուք կունենաք փրկանք
Եւ կը ապրիք պարզերես:

ԶԻՆԻՈՐԻ ԿՆՈԶ ԵՐՊԸ.

Արի բլբուլ, մէկ տեղ սպանք
Մեր գարզերը նոր ի նոր,
Անուշ եարիս քաշին տարան
Թողնելով ինձ գլխակոր:

Եարս գնաց սաէպ ստէպ,
Ինձ նայելով արտասւեց,
Էրւած սրտիս գեղ ու գարման
Կարմիր վարդդ էլ չբացւեց:

Քո գարդը իմ դարդի նման
Թոշ է տւել, խոցոտել,

Քո կայծն էլ իմ կայծի նման
Բոնկւել ու բոցոտել:

Դու կսպասես կարմիր վարդիդ
Ալ թփերի բացւելուն,
Ես կսպասեմ անուշ եարիս
Ինձ սիզաճեմ մօտ դալուն:

Եարս գնաց, ինձի թողեց
Անմխիթար հեռացաւ,
Խոցը սրտումս բորբոքւեց,
Եղաւ անբուժելի ցաւ:

Արի բլբուլ մէկ տեղ սդանք
Մեր գարդերը նոր ի նոր,
Անուշ եարս սիրով գնաց
Թողնելով ինձ սդաւոր:

ԷԼ ՄԵԶԻ ՊԵՏՔ ԶԼ

Էլ մեզի պէտք չէ բլբուլ, ալ վարդ,
Սէր ու սիրունի, հրճւանք ու զարդ,
Էլ մեզի պէտք չէ ծառ ու ծառաստան
Բերկանք ու գգւանք, այգի, վարդարան,

Էլ մեզի պէտք չէ լաց ու աղերսանք,
Միայն մեզ պէտք է ձեռք բերել վրկանք,
Եւ պէտք է բարձր պահել սուրբ խաչը,
Որ չխոնարհուի լուսնի առաջը:

Ներկայ կարիքը խիստ է պահանջում
Զնջել թշնամուն անգութ արնախում,
Ոգեւոր սրաով առաջ ընթանալ,
Գոնէ մի կերպով վրկանք ստանալ,
Կուել, տիւ գիշեր ջարդել թշնամուն
Ու բարձր պահել սուրբ խաչի անուն:
Տիրած վանքերը յետ առնել կրկին
Սուրբ մասունքները չթողնել թուրքին:

Սթափւենք, Հայեր մեզ պէտքէ սուր, գէնք,
Արնոտ մարտի դաշտ սրաով պիտ վաղենք,
Երազով անգամ մեր չտեսածը,
Պարզենց այսօր մեր տէր Աստւածը,
Եթէ մենք հի հայ մեր վրէժը չառանք,
Էլ մեզի չկայ յաւիտեան վրկանք,
Մեր լիրը դարեւոր անգութ թշնամին
Կջնջէ յաւէրժ թշւառ հայ ազգին:

Ասթիւ տարիներ, անհամար դարեր,
Խղճուկ հայ աղկը օդնութիւն կրհայցէ,

Անգութ թշնամին վրէժը չառած
 Զնջել կջանար սիրով քարացած,
 Ներկայ մօմէնտին մեր տէր ու պաշտպան
 Տեւէլ է մեզի սիրով ամեն բան,
 Թող նզովք լինի և բիւր նախատինք,
 Ով այս Սուրբ գործին չի անում բարիք:

Բաւ է, ընկերներ, մենք ծածուկ մնանք,
 Մեզ երբեք պէտք չէ ճոխ լեզւի պարծանք,
 Մեզ հարկաւոր է զէնք ու կուի դաշտ,
 Վանել թշնամուն դարեւոր անհաշտ.
 Օգնել մեր տէր ու պաշտպան Ռուսին,
 Սուրբ խաչի առաջ խոնարհել լուսին,
 Այսժամ հրճւինք յանուն փրկութեան
 Երբ Անատօլիան տիրեց Ռուսիան:

ԳԱՂԹԱԿԱՆԻ ԼՍ.ՑՀ.

Աւաղ, մեր օրերը սկսվ են անցել,
 Սուր ու շիւանիցը մենք աչք չենք բացել,
 Անօդնական, անտէր, թշւառ մնացել,
 Կեանքերիս ձեռքիցը տուն տեղ մոռացել,
 Մոլորւած փախչում ենք մենք ազատւինք,
 Արգեօք, փրկութիւն մենք պիտի գտնինք:

Աւեր ու թալան տալով մեր կայքին,
 Դառն հալածանքը հանեց մեր հոգին,
 Մենք ում գանգտուտինք, գիմենք որ մէկին,
 Բաւ չէ որ սարուկ դառել հնք թուրքին,
 Ո՞վ մեզ կսփոփէ, ում դուռը բախենք,
 Ումնի կիրկւինք, ումնի կը կախւենք:

Անգութ Տաճիկը օրերով, տարով,
 Զնջեց, սպառեց իւր արնոտ սրով,
 Բանդեց կործանեց հրդեհով, հրով,
 Բուրքին բօրանին սարով ու քարով,
 Վերջն էլ հալածեց, արգեօք ինչ անենք,
 Ի՞նչ դառ վշտեր կայ մենք միշտ պիտ տանենք:

Կայքերս խլեց, դոյքերս առաւ,
 Շատերիս ջնջեց մեր արեան ծարաւ:
 Հարսներ աղջիկներ փախցրեց տարաւ,
 Մեր պատիւն հողին հաւասար արաւ,
 Էլ տէղ չգիտենք, տսէք, ուր դիմենք,
 Որ մեր պատւովը գոնէ մենք ատրենք:

Յուրա ձմբան կիսին մենք թողինք փախսնք,
 Բորիկ, մերկարաց ճանապարհ ընկանք,
 Մենք էլ չգիտենք թէ ուր կգնանք,
 Բաւ չէ մենք բաշենք այսպիսի տանջանք,

Ե՞րբ պիտի վրկւենք, որին աղերսենք,
Ու մենք մի կերպով խաղաղ կեսնք գտնենք:

Սոված ու ծարաւ ու անապաստան
Պանդուխտ վայրերում եղանք աննշան,
Թողնելով տուն տեղ, անուշիկ վաթան,
Աստուած, արգեօք պիտ անես դատաստան,
Տաճիկին դատել արգեօք պիտ տեսնենք,
Սուլթանի գահը աւերած գտնենք:

Ա՛խ, թափառու են որդիքս սոված,
Կինս ու աղջիկս ողբում մերկաբաց,
Մեր աղերսանքը լսիր, ով Աստուած,
Այսպէս չարչարանք երբէկ շենք տեսած.
Բաւ, որ այսչափ նեղութիւն կրենք,
Խղճա մեղ, գոնէ մեր պատով ապրենք:

Դարերից ի վեր յոյսերով խափւած՝
Մենք աղերսում ենք փրկանք աշքաթաց,
Թէ քեզ պէտքէ հայ՝ փրկիր, ով Աստուած,
Մինչև երբ լինինք այսպէս հալածւած:
Աւաղ, արգեօք երբ փրկանք կը գտնինք,
Դառն օրւան վերջ կայ, մինչև երբ տանջւինք:

ՔԱԶԱԽԹԻՒՅՑԱՅ,

Ընկած աժայի շող անապատում՝
Նժոյգ ձիս նստած զէնքով, զրահով,
Արագ անլնդհատ գնում եմ գնում,
Վշտերով լցւած ես դժողոն սրտով:

Մինչև որ հասայ մի հովտի հանդէպ
Մթնեց երկինքը, լուսին էլ չկար,
Նժոյգո և ես քրտնքում կորած,
Հազար մաքերով տանջուում անդադար:

Եր կար զնացի չգիտեմ թէ ուր,
Մէկ էլ լսեցի ձիանց լրինջիւն,
Ես ընկդսեցայ խոր տիրութեան մէջ,
Ինձ չշմեցեց զէնքերի շաշիւն:

Լոելի եղաւ քրտական բառեր,
Սրտառուչ լացեր, հայի հնչիւններ,
Միրտս քար գարձաւ, հոգիս վրդովեկց,
Փայտացած մնաց իմ անքուն աշեր:

Շտապեցի ևս ոլանալ տոտչ,
Գնալ ու գանել այն լացի ձայներ,
Եւ երբ որ հասայ, Աստուած, ի՞նչ տեսայ՝
Մի քարայրի մէջ անհամար հայեր:

Ծերեր, մանուկներ, հարսներ, աղջիկներ
Կապած կապկապած գետին վայր թափած՝
Ողբում են, տիսուր խնդրում օգնութիւն
Սփոթնած դէմքով նիհար գալկացած:

Այդ որ ես տեսայ՝ կեանքս ուրացայ
Սուրը քաշեցի և կարատեցի
Բոլոր կապերը ձեռքի ոտքերի,
Եւ նորանց շուտով ես ազատեցի:

Հէնց այդ միջոցին մի խումբ լիրք քրտեր
Իրանց սրելով ինձ վերայ հասան,
Եւ անակնկալ կատաղի կերպով
Ինձ իւկոյն և եթ ջնջել ցանկացան:

Ես իմ սրովս շատ արիւն թափեցի,
Եւ այդ բոլորին ես ազատեցի,
Մէկ էլ քամակիցս ուժգին խփեցին,
Ես ընկայ ձիուցս, բարձր ճչացի:

Բայց մէկ էլ տեսայ, որ ոչ քրտեր կան,
Ոչ կապւած հայեր և ոչ նժոյգ ձի,
Ոչ գէնք, ոչ զբան, չկար ոչ մի բան,
Ափսոս երազ էր դա ցնորալի:

Ժողովրդական առած:
Սովածը երազում հաց է տիսնում,
Ինկ ծարաւը՝ ջուր:

ԶԻՆՈՐԻ ԱՂԵՐՄԱՆՔԸ.

Թողնելով տուն տեղ մասնաւութիւնը
Անուշիկ վաթան,
Գնում ենք փրկելու
Մեր մայր հայաստան,
Օգնութեան հասիր դու մեզի Աստւած,
Որ մեր յոյսերը տեսնինք մենք ծաղկած:

17344-58
Թողնելով ծնողք
Ես անմխիթար,
Համեստ սիրուհիս
Անգին քոյր եղբայր,
Օգնութեան հասիր, ով Տէր բարերար,
Մեր վաս յոյսերը հանէ ի կատար:

Դարերով ճեշւած
Թշւոտ հայ ազգին,
Մի՛ թողնիլ գերի
Անգութ տաճիկին:
Օգնութեան հասիր, Սուրբ Աստւածածին,
Փրկիր որդոցդ քո սուրբ կաթողին:

Խեղճ աղդիս սիրոյն
Փոյթ չէ ինձ միոնել

Մեր հայրենիքը
Փրկւած տեսնել,
Օգնութեան հասիր, քառաթև Սուրբ իսայ,
Որ մենք անվէներ գնանք օն առաջ:

Դ Ի Ա Կ

Ամպերի լացից արցունք է ցողեր,
Դաշտումը ընկած դիմակն հայզուկին
Մացամեր գցած իւր վերան ստւեր,
Պաշտպան արկի ուժից խեղճուկին:

Նորա առնական ճակատի վերայ
Կարմիր վարդի պես վերքերն է փայլում,
Մահւան խոր քնով ընկած ակամայ
Հոգեկան վշտով երազներ տեսնում:

Գաշտը ամայի, անմարդարնակ,
Ծաղկանց հոտն ընկած խնկիտ դ բուրեր
Անպաշտպան թողած խեղճուկի դիմակ,
Մօր ողբի տեղը կերպեն բւեր:

Ու ու աչերը անվեներ քաջի
Արծիւր կտցով հանել կ ջանայ:

Անուշ մայրիկի համբոյրի տեղը,
Թուչունք կ կտցէս երեսի վերայ:

Հանգիստ ոսկերացդ, թող հրձւի հոգիդ,
Քո ցանած սերմերն աճին զորացան,
Անզուսպ հոսանքը քո արշաւանաց,
Շուտով կ հասնի դէպ Կարին ու Վան:

Յոյս կայ տանջանքդ անմոռաց մնանք,
Իզձ ու փափազդ կառնի, ի կատար,
Քեզ ու քեզ նման անձնութացներին,
Կըդայ ժամանակ յիշենք դար է դար:

ՎԻՐԱՒՈՐ ՖԻԴԱՅԻ:

Գաղափարիս ասպարէզը
Լայնատարած ընդարձակ,
Ճանապարհը նեղ ու փշոտ
Ինձ տանջում է շարունակ:

Արիւն պրծեր իմ վերքերէն
Յորդոր, յորդոր կհասէ
Անուշ ետրիս աչքը ճամբէն
Ինձ անհամբեր կսպասէ,

Մի լար մէրիկ, բալիդ համար,
Որքան վէրք որ ունենամ,
Ինձի համար անհշան են,
Աէրս ու յոյսս են անթառամ:

Բայց թէ յոյսս ես չեմ կարում
Ողբեր, լացեր, ինձ պէտք չեն,
Ես դեռ ունեմ շատ նպատակ
Որ ի կատար սլիտ ենեն:

Կը գայ մի օր, մի ժամանակ
Յուսս կը լինի ծաղկած,
Նոր կը վայլեմ սէր ու գգւանք
Իղծս տեսնեմ կատարւած:

Նպատակիս ճանտպարհը
Քարքարոտ է սաստիկ նեղ,
Բայց թէ արդէն ինձի համար
Դեռ հեռու է մահն անեղ:

ԿԱՄԱՀՈՐԻ ՆՈՐ ՏԵՌԻՆ
(1 Յունիարի 1915 ամի)

Սւաղ տխուր ու սկ անցան իմ օրեր,
Ինչեր չեմ լսել, չեմ տեսել ինչեր,

Տարաբաղդ ազգիս ցաւով տոչորւած,
Էին միշտ անբաժան ինձանից սուդ լաց:

Հայոց հալածման օրերին ներկայ,
Շատ վիշտ ու զարդեր տարայ ակամայ,
Տեսայ ես անհամար ու անթիւ զոհեր,
Բնկած շտա դիտկներ և արեան գետեր:

Իմ կեանքիս երրորդ շրջանին մօտիկ,
Մութ որոտումով ծածկւեց երկինք,
Հայի գլխիցը կարեց իւր լոյսը,
Մնաց անկատար ազգիս մեծ յոյսը:

Եւ մենք անմոռաց վրէժով լցւած,
Հարիւր հազարներ անմեղ զոհ տւած,
Օր օրի վերայ միշտ կսպասէինք
Թէ մի օր կլնի վրէժ լուծէինք:

Վերջտպես խաչը չթողեց խաչին,
Որ լուսնի առաջ խոնարհւի գետին,
Առպարեզ եկաւ յանուն մարդկութեան
Ուղի պատրաստեց շատին փրկութեան:

Բայց մենք մեր զոհերն ընդ միշտ անմոռաց
Նորանց պատճառաւ կեանքերս ուրացաւ:

Միշտ մարտի դաշտում վրէժ ենք կանչում,
Նորանց արեան գինն ենք պահանջում:

Անմիւ գելտաստանք մնացին անտէր,
Անպաշտպան եղան, ոհ, շատ մանուկներ.
Էին ապագայի մեր յոյսը միակ,
Անգութ թշնամին թողեց պատի տակ,

Չէ, հայի Աստւած, դու չմոռացար,
Գործադրեցիր դատաստանդ արդար,
Շուտով հասցրիր դու մեզի պաշտպան,
Մեր ապաւէնը հէնց այդ էր միայն:

Դու եղիր պաշտպան, ով բարձրեալ Աստւած,
Թող արդար ուժը լինի միշտ ծաղկած,
Հին մենաստաններ, հայոց աւաններ,
Կրկին խաչերով զուգւէր զարդարւէր:

Երբ արժանացանք մենք այդ բերկւանքին,
Բաղդի ցանկալի ուրախ հրճւանքին;
Այն ժամ ես կասեմ ուազմի ընկերին
Իմ կեանքիս հատոր շնաւոր քո տարին:

Թող այս տարեմուտն ու նոր կաղանդին
Ողջունէ բաղդ, հասնինք այդ օրին:

Իսկ ես հանգիսով տօնեմ փառաւոր
Եւ գոչեմ ընկեր, տարիկ շնհաւոր:

Իսկ ես ներկայումս հեռու իմ տանից,
Զուրկ զաւակներից և գերդաստանից,
Մարտի դաշտումը ես ան միթթար,
Մարի ովկեանում տանջվում չարաշար:

ՀԱՅ ԳՈՒՍՏՈՆՔ

Հայ զուսանը երգ է երգում,
Ոլոր մոլոր ման զալով.
Քնարիկը սեղմած կրծկին
Աշխուժով լարքին տալով:

Նա վշտովի և վիրաւոր
Դարդին դարման է փնտրում,
Նա յուզւած է և զիխակոր
Որդուց նշան որոնում:

Խեղճ զուսանի օրն էր սեցած,
Եարին տարաւ թշնամին,
Ուրախ օրը տիուր դարձաց
Տւել էր ցաւ թշնամին,

Բիւր գնտակներից անհամար
Ազատ մնաց գուսանը,
Որդու կորստից վշտահար
Ախ, զոհ գնաց գուսանը,

Նորա ռազմի երգը գողարիկ
Աշխուժ տւեց շատերին,
Խրախուսում մէկիկ մէկիկ
Մարտում կուող զինորին:

Հայ գուսանը երգ էր երգում
Որդուն, եարին փնտրելով,
Նա չ գտաւ ոչ մի տեղում
Կուրծքը շարվեց վէրքերով:

Դ է Պ Ք Ե Ր Ի Ց
Պատկերներ

I

Ահ ամպերը կապոյտ երկինք պատեցին,
Սար ու դաշտեր զով անուշիկ հովն ընկաւ,
Փայլուն արև մթութեան մէջ ծածկեցին,
Օձանման գետը արագ լնիթացաւ:

Վարար ջրով գնում էր ափին տալով,
Համեստութեամբ դէպ օն առաջ կոլար,
Վճիտ, տիուր հանդարտութեամբ խայտալով,
Դարտը շատ էր կարծես թէ արիւն կուլար:

Մթնեց երկիր, զարթեց չխչիկն ու բուն,
Ամազ երկնքում անզօր լուսինն էր փայլում,
Նոր հարսի պէս մերթ պահվում էր նա սիրուն,
Կէս երեսով մէրթ սառնութեամբ երւում:

Բայց գետն հանդարտ իւր լնիթացքով յորդառաս,
Ոլոր մոլոր նա անըդհատ կը հոսեր.
Մեր գարգերից մի լուր չտալով հաստադ,
Կանաչազարդ դաշտերը կ ոսոգեր:

Անցան ժամեր սարի լանջից շատ հեռու,
Խուլ լսվում էր անուշ ձայնը սրնգի,
Մթութեան մէջ խեղճ հովիւն էր տհարկու
Կարծես տիուր սպասում էր վատնգի:

Սիրտս դառած անվախ պատառող արիւծ,
Բայց ոհ դէմքս այլանդակված դալկացած,
Ես վիրաւոր չար գարեոր թշնամուց
Այստեղ անզօր ու անպաշտապան եմ լնկած

Գւտափին էր անկողինս՝ չոր հողը,
Կրծքիս վերայ ալ կակաչներ կ փայլէն.
Արդեօք որտեղ կ գտնի ինձ փնդքողը,
Թէ, պետ ինձ գան վերջին ժումիս էր հասնեն.

Սնուշ մէրիկ, ազիզ բալէդ էլ չկայ,
Վերքերն անբոյժ ցաւերն հազար ու պէս պէս
Առանց վերմակ գլխի տակը մի քար կայ.
Ազգի սիրուն ալ է հագել վարդի պէտ

||

Կէս գիշեր էր լսւեց ձիանց տրոփիւն,
Իսկոյն և եթ իմ վերքերով ցնցւեցայ,
Իսկ գետիցը լսւում էր խոր շփրթիւն,
Վէրքերս անբոյժ կարծես ես կենդանացայ:

Եկորները մերոնցից են չ գիտեմ,
Թէ անհաւատ արիւնախումներից են,
Լեզու չունիմ ձայնո խեղդւած՝ ինչ անեմ,
Ոտքերս թոյլ ինչպէս հետեւմ անպէն:

Գը ոս զը ոս պայթեց հրացաներն անդնդատ.
Սարի լանջը վառ կրակով լոյս տւեց,
Չտեւելով մինչև երկու ակնթարթ,
Խեղճ հովվեր լանջիցը ցած զլորւեց:

|||

Պարզեց երկինք, լուսինն ելաւ, լուսն ընկաւ,
Խումբ խումբ աստղեր համեստութեամբ պապղում
Ոչինչ չկայ, ձայներն էլ հանդարդացաւ:
Արշալոյսի պայծառ լոյսն էր շող-շողում

Աչքու անդօր չորս բոլորս գձեցի,
Լուսաշաղաղ մթնում ոչինչ չտեսայ,
Կարծես, թէ ես սթափվեցի, զարթեցի,
Աւաղ աշխարհ, նպատակիս չը, հասայ:

Լոյսը բացւեց փայլուն աստղեր չքացան,
Լուսնի շողը հեազ-հետէ պակասեց,
Կանաչաղարդ մարդագետնին հիւր եկան
Ոչխար, տաւար, բլբուլն էլ երգն սկսեց:

Կաքանէրը սկսեցին շարական,
Բոլոր թոչունք արձակեցին ճուղոց,
Հայրը որդուն կ գնարէր՝ մայրն աղջկան,
Իսկ ես հանդարդ հանում էի խոր հոգւոց:

Սարի քամակից արևն դուրս եկաւ,
Լուսաճաճանչ ցրւեց ձառագայթները,
Պարտքը ճանչեց, իւր գործի գլուխն անցաւ,
Սարին գաշտին սփռեց իւր լոյս ստերը:

Գոս, գոռոցները շատացան, մօաեցան,
Ամեն կողմից մարդկանց ձայներ են լսւում,
Զէնքի շաշիւնն օդն էր թնդում մուլթ գուման
Կարծես երկնքից հուր ու բոց էր թափւում։

Ողջ մարմինս սառնութիւնից էր դողում,
Հանդիսա չէի ողբ հառաչի ձայներից,
Մեծ ու փոքր արեան ծովումն են լողում
Այրում տներ թալնում կայքեր նորանցից,

Լուսինն արդէն թագ էր կացել, էլ չկար,
Հրդէններն էր լոււաւորում աշխարհը,
Բնութիւնն էլ նորանց հաշվում էր վատթար,
Ռւժեղի դէմ առանցվում էր տկարր։

Չոր ու գաշտեր արիւնալի ծով դարձած,
Տաճիկ ու հայ զձէլ էին սուգ շիւան,
Գետ ու վտակ կարծես արիւնով ներկված,
Դարձել էին դիակների դամբարան։

Անբուժելի վէրքով հանգարտ անքում եմ,
Անգութ բազդիս հարւածին ա իծելով,
Վշտերս աղերսելով ես հեկ-հեզում եմ,
Ծանը է անցնում ժամս վրայ զլիսիս տալով։

Առաջօտեան հովը վշեց խիստ անուշ
Զովացրեց ամենքին էլ հաւասար
Այդ զզացի բայց վէրքերսէր ո՞հ անբոյժ
Ան կարեկից տանջւում եմ չարաչար։

Ենկած տեղս ամայի էր մարդ չկար,
Գիշերային չար մարդկերանց ապաստան,
Արգեօք ես այստեղ պիտ մնամ շատ երկար,
Աստ է որոշւած թշւառիս տանջարան։

Մէկ էլ յանկարծ չօրս բոլորս նայեցի,
Տեսայ ինձ մօտ շատ քրաերի զիակներ
Ասկեար, Ալի, Արամին էլ ճանչեցի,
Որոնք անշունչ գետնի վերայ են փռեր։


ՄԱՀ ԿԱՄ ԱԶԱՏՈՒԹԻՒՆ

Սնցան զարեր անգորբութիւն
Ու խաղող կեանք չունեցանոք,
Ստրկութիւն, արիւն, թալան,
Ամեն չարչարանք տեսանք
Այժմս արիւն-արբու թուրքը
Մեզ մորթում է անխնայ,
Մեր գոյքերը թալնում, տանում,
Նոցա սրտում խիղճ ե՞րբ կայ։

Զինւէք հայեր բաւ է մնանք,
Ստրկութեան ենթակայ,
Մահ, կամ ազատութիւն սիրենք
Մեղ այլիս ճար չկայ:



Մեր պատիւը ոտքի տակ է,
Հարս ու աղջիկ շմաց,
Մատաղ սերունդ պատանիներ
Բոլորը ձեռքից գնաց,
Զոհերի թիւն անհամար է
Գոնէ լինինք մեզ պաշտպան,
Զէնք վերցրէք կուի գիմենք,
Մինչև մեզ դան օգնութեան:
Խփէք, էլ պէտք չէ սպասել,
Նոքա մեզի ջարդ կուտան,
Կամ կը մեռնենք կամ կը ջնջենք
Էլ անցել է ամեն բան:



Որքան սիրենք ազատութիւն
Այնքան յարգենք սկ մահին,
Էլ մեղի պէտք չէ սպասել,
Մահն է բաժն խեղճ հային,
Այսպէս եթէ շարունակվի
Կլնի չայաստանն աւեր:

Քաղցր ժամերգութեան աեղակ
Նոր կերպեն կոյը բւեր,
Խփէք գոնէ կոմ վերջանանք,
Կամ թէ ջնջենք թշնամուն,
Կամ թէ սիրով գրկենք մահին,
Կամ թէ գանինք փրկութիւն:

Զը վհատինք, ժամանակ է,
Շուտ կ հասնի Արծիւը,
Քար քանդ կանէ մզկիթները,
Կ կանդնի մեր պատիւը,
Մեր փրկանքը կախւած է մեր
Հզօր Ռուսիոյ բանակից,
Անդրանիկն էլ իւր վաշտերով
Գալիս է հէնց քամակից:
Մահից մեզ պէտք չէ վախենալ
Եկէք կուենք քաշ-արի,
Լիայոյս հնք մեր արիւնով
Մեր իդք պիտ կատարի:

Մ ի գ ի Շ ե ր

Խաւար գիշեր էր, տիսուր ամպոծ,
Քրտնաջան մշակն հանգիստ էր առած.

Ննջում էր անդարձ , հեռու հոգսերից ,
Եւ ամենօրեայ դառն աշխատանքից :

Ահա լսում է մի խոր հառաջանք
Ու ինձ պատճառում մտայոյդ տանջանք.
Ահա շատ մօտիկ լսում են ձայներ,
Վշտալի սրտի տիտոր մրմունցներ:

Առաջ ընթացայ, ախ, ցաւովի բան,
Տեսայ մի քանի խեղճ օտարական
Մի պատի տակին նոքա նստած են,
Հանդարտ ու անձայն արցունք կթափեն:

Ափու՝ զքո տուն մացեր՝ է վերան,
Ափու՝ քո լաճեր տիօրի օր յիդան,
Վաւեր զիս տարեք, տարեք ձզի հետ,
Եբ որ գուք կերթաք մըր պապուզ վաթան:

Պառկած էր ափուն հին մուշտակ վերան,
Պառկած էր հանդարտ, անշունչ անկենդան,
Նա վերջին անդամ խոր հոգւոց հանեց,
Յաւիտեան քնապ աչքերը փակեց:

Պատառուեց ամպի ալիքն աջ ու ձախ,
Շողաց լուսնեակը փրփուրի միջից,
Լսեց նա անձայն բիւր աւազ ու վախ,
Եկան ամպերը ծածկեցին աչքից:

20067
20068
20069

John John 2006
Gumpfeller John 20068
John 2006
John John
John John 2013
John John
John John
John John

9/10/35 - 9/1/49

375 5 11

2 11

12 1

11 1

1991/9/74

1991/9/74